

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ
ՀՈՎՀ.ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈՆՄՈՒՄ

Միլվա Խաչատրյան
ԱրՊՀ

Բանալի բառեր- եղեն, ցեղասպանություն, պահանջատեր, խիղճ, արդարություն, ազգային, մղձավանջ, ահեղասատ, ըղձասաց, հանցագործ, ոճրագործ, մարդակեր, յաթաղան, բնաջնջել, բնօրրան, հատուցում:

Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը 1915 թ. Հայոց մեծ եղենի թեման արծարծող բացառիկ չափածո ստեղծագործություն է թե ծավալով, թե գրական-գեղարվեստական կառույցի առանձնահատկություններով եւ թե նյութի խոր, համակողմանի ընդգրկմամբ ու լեզվառճական ինքնատիպությամբ: Սովորածավալ մի ամբողջ հատոր կազմող այս գրական-գեղարվեստական, նաև՝ փաստավավերագրական կոթողի կերտման աշխատանքին հայ ազգային մեծ բանաստեղծը ձեռնամուխ է եղել 1941-ին եւ լրամշակել, հղկել, ավարտին է հասցրել մինչեւ իր կյանքի վերջին օրերը:

Ինչպես վկայում է խմբագիր Հարություն Ֆելեքյանը, «Հայոց դանթեականը» պիտի լույս ընծայվեր 1984թ.: Այն արդեն տեղ էր գտել հրատարակչության թեմատիկ պլանի մեջ: Խմբագրված, պատրաստ էր հրատարակչության, սակայն խափանվեց նրա լույսընծայումը եւ մնաց անտիպ մինչեւ 1990 թվականը:

Այն, որ Հայոց Մեծ եղենի մասին պատմող այս գիրքը եղել է համազգային մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի ստեղծագործական կյանքի գլխավոր գործն ու նպատակը, վկայում է Հ. Ֆելեքյանը:

«Պոեմը խմբագրելիս զարմանքով հայտնաբերեցի շիրազյան մի բացառիկ ունակություն ևս: Աչքերի լույսը պակասել էր. ես կարդում էի, ինքը լսում էր, և էջ առ էջ առաջ էինք անցնում. մեքենագրական ամենաաննշան շեղումն անգամ ուշադրությունից չէր վրիպում: ... Նա անգիր էր ասում, ես համեմատում էի մեքենագիր տեքստի հետ, 8 հազար տողանոց պոեմն անգիր գիտեր. ..Զարմանահրաշ հիշողության վկայություն լինելուց առաջ ինձ համար սա հավաստումն էր այն իրողության, որ պոեմի ամեն մի տողը ստեղծագործական տառապանքի արդյունք է, որ այս գիրքը Շիրազը գրել է ողջ կյանքի ընթացքում, ամեն օր, ամեն ժամ: Առանձին հատվածներ անցել են ժողովրդի ձեռքը, անգիր են արվել, արտասանվել, ձայնագրվել»:¹

«Հայոց մեծ ըղձասացը» (գրականագետ Սուրեն Աղաբաբյանի բնութագրումն է) և հայոց մեծ ողբասացը , հայոց մեծ նախճիրը պատկերող մեծակտավ

¹ Հ. Շիրազ, Հայոց դանթեականը, Երևան, 1990, էջ 379:

ստեղծագործության յուրաքանչյուր տողը, հիրավի, իր գերզգայուն ու մեծ սրտի արյունով է գրել՝ հայոց նախադեպը չունեցող ողբերգությունը ապրելով ու վերաապրելով որպես անձնական ողբերգություն: Արդարության սուր զգացողություն ունեցող հախուռն բանաստեղծը խորհրդային՝ ազգայինը մերժող վախի մթնոլորտում խիզախել է՝ ոգելով իր ազգի վշտի լավան: Տող առ տող, գլուխ առ գլուխ, տառապանքով կերտել է մեկ ու կես միլիոն անմեղ զոհերի գրական կոթողը՝ հանճարին տրված ի վերուստ պոռթկուն քանքարով:

Եղեռնի դժոխքը ներկայացնելուց բացի, բանաստեղծը պատկերել է նաև հայդուկային պայքարը:

«Հայոց դանթեականը» բաղկացած է նախերգանքից, 21 գլուխներից և վերջերգանքից: Պոեմի գլուխների վերնագրերը հուշում են արծարծվող նյութի մասին: Այսպես, «Գողգոթայի գիշեր», «Գիշեր խաչելության», «Անեծքի գիշեր», «Գիշեր լուսնահառաչ, պառնասախեղդ գիշեր», «դժոխադուր գիշեր», «Լռության գիշեր», «Մեծ մռունչի գիշեր» եւ այլն:

Պոեմի յուրաքանչյուր չափածո գլխին նախորդում է հրապարակախոսական շնչի արձակ նախաբանը, ուր շիրագյան պատկերավոր խոսքն ստեղծում է այն զգացողությունը, ասես արձակ բանաստեղծական խոսք եւ ընթերցում: Իտալացի բանաստեղծ Դանթեի, ով իր հայտնի ստեղծագործության մեջ պատկերել է դժոխքը, և հայոց մեծերի Գ. Նարեկացու, Կոմիտասի, Անդրանիկ զորավարի, Հովհ. Այվազովսկու և մյուս երևելիների հետ «փոքր Հովհաննեսը՝ Հովհաննես Շիրազը, մտքի թևով «շրջագայում է» պատմական հայրենիքում, ուր տեղի է ունեցել մարդկության պատմության մեջ ամենամեծ ոճիրներից մեկը՝ 1915-ի Հայոց ցեղասպանությունը:

«Հայոց դանթեականը» տեսլաողբային դատաստանամատյան է, որը մարդասեր բանաստեղծը պարզել է աշխարհին՝ դատապարտելով ամենից առաջ մեծ տերություններին, որոնց հանցագործ անտարբերության արդյունքում, իր պատմական բնօրրանում, թուրքական բռնապետության քմահաճույքով բնաջնջվել է մեկ ու կես միլիոն հայ՝ հրի ու սրի մատնվելով ամենավայրագ ձևերով: Պոեմի գաղափարական ուղղվածությունը խտացված է «Վերջին գիշեր» վերտառությամբ պոեմի վերջին գլխում: Բերենք երկու նախադասություն.

«Ով աշխարհ, այս եղեռնը քո խղճի վրա է ծանրացած: Աչքերդ, թեն չոր, բայց հայոց այս մշտախարույկ ցավերի և տառապանքների, խոցերի ու վերքերի վկան են, իվված հողերի ու չթաղված դիակերների վկան են... բայց թող երկնառաք անեծքս հրաբխովի ձեր ականջների մեջ՝ թե նորից լռեք»: «Վերջերգանք»-ից ներկայացնում ենք մեկ հատված

*Ես այս դարի սրտին պիտի
Փորագրեմ, որպես վերքեր,
Որպես հետքերն հայոց վշտի՝
Երեք միլիոն հայ անուններ,
Որպես մեղքերն հողագնդի,*

*Երեք միլիոն անմեղ զոհեր,
Որ մորթվեցին յաթաղանով
Քար մարդկության աչքի առաջ,
Հարբած հայ ծով արյան գինով՝
Այն օրերում հայահառաչ,
Որ դարերից ծանր են վշտով՝
Հայաստանով այն ամայի,
Խղված հազար լեռ ու դաշտով,
Խղված բախտով ամեն հայի:*

...

*ՈՒ ոսոխի սրտին պիտի
Ես դեռ փորեմ, փորեմ, փորեմ
Որպես վիհերն Արարատի՝
Երեք միլիոն հայ անուններ,
Անմեղ, ինչպես ռին իմ սրտի,
Ինչպես մանուկ մորթված ձյուններ՝
Մորթված հին ցեղն Արարատի:
Այս դեռ պիտի փորեմ, փորեմ՝
Որ հովանա վերքն իմ սրտի՝
Կոտորածներն ու հայոց դժխեմ՝
Մեղքերի մեղքն հողագնդի¹*

Համամարդկային վեհ ըղձանքներով տրոփող բանաստեղծի սրտում տեղ չունի նեղ չարությունն ու վրիժառությունը: Պոեմի յուրաքանչյուր գլխում՝ դիմելով այս կամ այն ազգին ու պետությանը՝ Ամերիկային, Անգլիային, Գերմանիային, Ֆրանսիային, Իտալիային, <<հյուսիսի հսկա>> բարեկամ Ռուսաստանին, մերձ հարեւան ու <<եղբայր>> Վրաստանին, Չինաստանին, Հնդկաստանին, Պարսկաստանին և շատ այլ երկրների ու ժողովուրդների, ոգեկոչելով մարդկությանը հայտնի այդ ժողովուրդների հանճարներին՝ բանաստեղծը արդարամտության ու սթափության կոչ է անում՝ հիշեցնելով, որ անպատիժ հանցանքը նոր հանցանքների համար պարարտ հող է հանդիսանում:

Դատապարտում է մեծ տերությունների անհասկանալի ու հանցագործ անտարբերությունը՝ կասկածի տակ առնելով ամերիկյան «մարդասիրությունը», չմոռանալով, սակայն, հայ որբերին տված հացի կտորը: Նա ահագանգում է ողջ մարդկությանը՝ նոր եղեռներն ու ցեղասպանությունները կանխելու, «մարդկության տանը»՝ Երկիր մոլորակին սպառնացող պատերազմի

¹ Հ.Շիրազ Հայոց դանթեականը, էջ 374:

հրձիգներին սանձահարելու և մարդկության խիղճը մշտապես արթուն պահելու. «Արթնացեք մարդիկ, որտեղ քնած մի խիղճ կա՝ զարթնեցրեք, բացեք խղճի աչքերը, արթնացրեք խղճի խիղճը՝ մարդկային մեծ բանականությունը...»:¹

«Բռնության ժայռի մեջ» խորհրդային խավար գնդանում, բանաստեղծը հնչեցնում է հույսի, հավատի և արդարության մեղեդին՝ հանդես գալով իբրև սրախողխող արված տասնյակ հազարավոր անմեղ մանուկների ու մայրերի, ազգի սերունդի՝ մտավորականության, իր հայրենիքում մոռված հայության պահանջատեր, կույր ու խուլ ձևացող աշխարհին ուղղելով իր բանաստեղծական ցավակեզ խոսքը: Աշխարհը պետք է և պարտավոր է դատապարտել ոճրագործին: Ազգային զարհուրելի ողբերգության աշխարհաճանաչման խնդիրն է արծարծել բանաստեղծը «Հայոց դանթեականը» պոեմում՝ մերժելով «եղկելի ու նողկալի անտարբերության սառույցը»:

Պոեմի «գեղարվեստական առաքելությունն» ակնառու է «Մեծ մոունչի գիշեր» գլխին նախորդող արձակ նախաբանում:

Համառոտ ներկայացնենք այն. «Ես ահեղ դատաստանամատյանն եմ արցունքաշարով որմնաշարում, որին դիպչելով պիտի փշրեն իրենց բութ ճակատները լռության օրերն ու դարերը... սա հրաբուխն է այն զոհասրտերի, որոնք չկարողացան լռությանն ընդդեմ ժայթթել, աշխարհի լռության հողը ծանր լինելու ժայռե պատճառով...»

Ես խարանել եմ ուզում վարանողների լռության պղծաճակատը... լացն ու ողբն են անչափելի. Հայոց եղեռնն է անչափելի,- Մասիսի հրաբուխն են իմ այս ողբամատյանի բյուրավոր ջարդված բերանների շրթունքները Աստծո կույր աչքի մեջ շատրվանում... քանզի անարդարություններն են անչափելի>>:²

Քաջատեղյակ լինելով հայ ժողովրդի պատմության թե հերոսական, և թե արյունոտ էջերին և այդ պատմությանն առնչվող նրա բարեկամների ու բարեկամ ներկայացող պետությունների վարած քաղաքականությանը՝ իր «փոքր ածուխ» վշտակիրը աշխարհին է պարզում Թուրքիայի իրագործած ոճրագործությունն իր ժողովրդի նկատմամբ, պահանջելով ճեղքել «պիղծ լռության պատը» և իրերը կոչել իրենց անուններով. ահեղ վրեժասատով արդարության ատյան բացել և «եղեռնագարկ» իր ժողովրդի բռնազավթված բնօրրանը վերադարձնել տիրոջը: «Շուրթերին դողացող» զայրույթով նույնիսկ թշնամուն՝ թուրքին է դիմում՝ «մթնուղեղ, խաբված խաժամուժին», և հարց հղում. «Ինչպե՞ս չանիծեմ քեզ»:

Չգիտես ուսկից «արտավիժած այդ ցեղասպանը», որ որևէ արժեք չի տվել «մարդկության գանձարանին», ցայսօր աշխարհի աչքի առաջ ուրանում է իր նախահայրերի նախաձեռնած նախճիրը:

¹ Զ. Շիրազ, Հայոց դանթեականը, էջ 236:

² Նույն տեղում, էջ 290:

Այս լկտի ուրացման և պատմական ճշմարտությունը անտեսողների դեմ է ընդվզում բանաստեղծը «Հայոց դանթեականը» պոեմում:

Պոեմի գլուխներին նախորդող արձակ նախաբաններում, դատապարտման խոսքին զուգահեռ, բանաստեղծը վկայակոչել է նաև պատմական վավերագրեր՝ առ այն, որ 1915-ին իրագործված հայոց ցեղասպանությունը Թուրքիայի կողմից պետական մակարդակով ծրագրած, նախապես մշակված հայաջինջ քաղաքականության ծրագիր է: Դիմելով Օսմանյան Թուրքիայի դաշնակից Գերմանիային՝ Հովի. Շիրազը գրում է. «Արթնացող դեմոսի ոգովդ դու էլ անեծքով թքիր խելացնոր անցյալի աչքի մեջ... թող փոքրիկ տղան մեծերիդ ձեռքով ուրիշի ոչ մի վարդ չքաղե այլևս... և չիմանա, թե չգիտեմ, որ մեղսակից ես հայ կոտորածներում՝ անգղ յաթաղանի հետ...»:¹

Ակնհայտ է հուսախաբությունը Ռուսաստանին ուղղված տողերում: Նշվում է ռուսական զորքերի Ղարսից, Վանից, Կարինից նահանջի և անգեն ժողովրդին թուրք մարդակերների երախում թողնելու մասին, իսկ որպես «հատուցում մեղքի»՝ պահանջումը Մասիսի, ասել է թե՛ Արեւմտահայաստանի ազատագրումը: «Երբ աշխարհում գողի ու գայլի գիշերն էր թագավորում, ելավ գայլագլուխ յաթաղանը, իմ՝ դարերով արդեն փոքրացած հայ ազգին գլխատելու... Հայոց քարերն էլ լացին, բայց այլոց խիղճը քնած մնաց», - մորմոքում է բանաստեղծը «աստղերի պես բազմամիլիոն, բայց աստղերի պես խավարում գտնվող» հնդիկ ժողովրդին ուղղված իր խոսքում:²

Փաստորեն, «Հայոց դանթեականը» պոեմի գերակա խնդիրը 1915-ին Օսմանյան Թուրքիայի կողմից սանձազերծված հայոց ցեղասպանությունը դատապարտելն ու աշխարհին ճանաչելի դարձնելն է, ինչը եղել է հայոց ահռելի վշտի բեռնան տակ կքած ժողովրդական բանաստեղծի կյանքի գերագույն նպատակը:

«Պոեմում մեկը մյուսի հետևից վեր են հառնում եղեռնապատումի տեսլապատկերները՝ սարսափի, զարհուրանքի, չարչարանքի պատկերներ, որոնց առաջ նսեմանում են անգամ դանթեական դժոխքի գույները, իսկ դրանց ստեղծողը Դանթե Ալիգիերին, այդ ողբերգական պատկերների ահռելի չափերի առաջ կարկամում է:

Խղճի ու բանականության, մարդկայության ու ասպետականության կանոններով հյուսված մեղադրական թուղթ, որը պետք է գրվեր, չէր կարող չգրվել», - գրել է գրականագետ Մուրեն Աղաբաբյանը «Հայոց դանթեականը» պոեմի մասին:³

¹ Նույն տեղում, գլուխ 12, էջ 149:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 372-373:

Այո, պիտի գրվեր և պիտի Հովհ. Շիրազը գրեր, հայոց մեծ սգակիրն ու ըղձասացը, աննախադեպ ժողովրդայնություն վայելող հայոց մշտաբերուն խիղճը, հայամերժ ժամանակներում հայ ոգու անթեղված կրակը բորբոք պահող, ժողովրդի անհուն սիրով թագադրված դասական քնարերգության արքան:

«Հայոց դանթեականը» պոեմն իր հոգու բովանդակ էությամբ հայոց վիշտն ապրած մեծ բանաստեղծի հզոր պոռթկումն է՝ ընդդեմ բոլոր ժամանակների ցեղասպանությունների ու բռնությունների: Այն պատմական վավերագիր է, յուրօրինակ դատաստանամատյան և գեղարվեստական հուշարձան 1915թ. մեկ ու կես միլիոն անմեղ հայ նահատակների շիրիմների:

Ամփոփում

Հայ մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի գլխավոր ինդիքը, որն արձարծված է սույն հոդվածում, 1915թ. ցեղասպանության դատապարտումն ու այն համայն աշխարհին ճանաչելի դարձնելն է: Պոեմը գեղարվեստական հուշարձան է՝ մեկ ու կես միլիոն անմեղ նահատակների հիշատակին:

РЕЗЮМЕ

Задача миропознания армянского геноцида в поэме Ов. Шираза

«Айоц Дантеакан»

Сильва Хачатрян

Резюме

Ключевые слова: Геноцид, совесть, справедливость, национальный, кошмар, преступник, людоед, ятаган, уничтожение, колыбель, расплата

В статье "Проблема миропознания геноцида" в поэме Ов.Шираза "Айоц дантеакан" обсуждается и рассматривается цель и задача поэмы великого армянского поэта Ованеса Шираза, которая является осуждением Армянского геноцида 1915года.

Поэма имеет мировое значение и является памятником о памяти полтора миллиона невинных армянских жертв геноцида 1915.

The Task of Armenian Genocide World Recognition in H.Shiraz Poem

"Hayoc Danteakan"

Silva Khachatryan

Summary

Keywords: genocide, conscience, justice, national, horror, a criminal, cannibal, yataghan, the destruction, cradle, revenge

In the article "The Problem of World Recognition of the Armenian Genocide" we discuss and consider the purpose and task of the great Armenian poet Hovhannes Shiraz "Hayots Danteakan" which is a condemnation of the Armenian Genocide of 1915.

The poem has a global significance and is a tribute to the memory of one and a half million innocent victims of the Armenian genocide of 1915.